

ՄՈԼՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

16-ՐԴ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՅԻ ՊԼԵՆԱՐ ՆԻՍՅԸ

Օրերս Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանում տեղի ունեցավ 16-րդ գիտական սեսիան: Սեսիայի պլենար նիստում ակադեմիկոս Վ. Համբարձումյանը զեկուցեց «Դիֆուզ միզամածուխյունների և կոսմիկական կլանումը» թեմայի շուրջը: Չեկուցողի կարծիքով, միզամածուխյունները և նրանց լուսավորող աստղերը կապված չեն իրար: Ետ գենետիկ կապով, այլ պատահաբար իրար հանդիպում են իրենց շարժման ընթացքում: Այստեղից պարզվում է, որ բացի լուսավորված դիֆուզ միզամածուխյուններից, որոնք լուսավորված են նրանց մոտ պատահամբ գտնվող պայծառ աստղերի լույսով, կան նաև բաղմաթիվ չլուսավորված միզամածուխյուններ:

Այդ մոլթ միզամածուխյունների սիստեմը կազմում է մեր գալակտիկայի կլանող շերտը, որի գոյությունը դեռևս 1930 թվին հաստատել է ամերիկյան աստղագետ Տրենպլերը: Մոլթ միզամածուխյունների հասկումները հնարավոր է հետազոտել՝ ուսումնասիրելով աստղերի թվերի Ֆլուկտուացիաները երկրի վրա: Այս ուղղութամբ շարունակվում է աշխատանքը Երևանի աստղագիտարանում:

Նիստի երկրորդ զեկուցումը նվիրված էր «Հայաստանի ժողովրդական տնտեսությունը 1914—1918 թ. թ. պատերազմի և Հայրենական մեծ պատերազմի շրջաններում» թեմային, որի մասին զեկուցեց դոցենտ Հ. Թումանյանը: